

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ,  
ԺՈՂՈՎՐԴԻ՞, ԹԵ՞ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱ

## ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ

Մարդկության պատմության նոր և նորագույն շրջանում իրավունքին ու իրավագիտությանն առաջադրվում են ինչպես տեսամեթոդական, այնպես էլ կիրառական բազմաթիվ մարտահրավերներ, որոնց պետք է տրվեն գիտականորեն հիմնավորված և գործնականում արդյունավետ լուծումներ: Իրավագիտությունը պատմության նոր շրջանում լուծել է բազում մարտահրավերներ, որոնցից են քաղաքականության ֆենոմենը և այդ համատեքստում իրավունքի ու քաղաքականության հարաբերակցության հարցը:

Հաղթահարելով խորհրդային իրավական մերժողականությունը և դրա արտահայտություն համարվող իրավունքի նկատմամբ քաղաքականության գերակայության կայուն դիրքորոշումները՝ իրավագետները երևի թե տարվեցին իրավական ռոմանտիզմով ու իդեալիզմով՝ կարծելով, որ իրավունքի և քաղաքականության հարաբերակցության հարցը լուծված է մեկընդմիջտ՝ սահմանադրական կարգավորման այնպիսի մոդելի հաստատմամբ, ինչպիսին են իրավական պետությունը, քաղաքացիական հասարակությունը, սահմանադրական կարգի արդի սկզբունքները: Ժամանակը ցույց տվեց, որ խնդիրը լուծված չէ: Անկախանալուց ի վեր գրեթե երեսուն տարի իրավական պետություն կառուցելու ընթացքում իրավունքին ու հետևաբար իրավագիտությանը քաղաքականությունը միջտ էլ ձեռնոց է նետել՝ հայտարարելով իր առաջնայնության հավակնությունների մասին: Թվում էր, թե հեղափոխական վերակառուցումը ձեռնպահ կմնա իր քաղաքական առաջնայնության պնդումից, սակայն մեր օրերի ընթացքը ցույց է տալիս, որ մարտահրավերները շարունակվում են, ընդ որում՝ ավելի հանդուրձում ու համարձակ: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ: Չէ՞ որ մենք կարծես թե ամեն ինչ արել էինք իրավունքի գերակայությունը մեկընդմիջտ հաստատելու համար:

Որպեսզի ստանանք այս հարցերի պատասխանները, փորձենք պարզել, թե արդյոք մենք իսկապես ամեն ինչ արել էինք այդ խնդիրը լուծելու համար: Բայց մինչ այդ հարկավոր է գտնել իրավունքի և քաղաքականության հարաբերակցության հարցի լուծման տեսամեթոդաբանական ճիշտ պատասխանը, որից ելնելով՝ որոշել մեր՝ արդեն տասնամյակ սևող գործողությունների արդյունավետությունը:

Տեսական գրականության մեջ բազմաթիվ են հետազոտությունները և բանավեճերն իրավունքի ու քաղաքականության հարաբերակցության, մասնավորապես՝ առաջնայնության, փոխգործողության, հակասությունների, հատկապես քաղաքականության գերակայության դրսևորման պատմական օրինակներ վեր հանելու, այդ քաղաքականության ցուցադրման վերաբերյալ: Սակայն դրանցում գրեթե բացակայում են խնդրի լուծման տեսամեթոդական ուղիները: Եզրակացությունները շատ ընդհանուր են, հետևաբար՝ անորոշ, օրինակ՝ քաղաքականության և իրավունքի հարաբերակցության հարցի լուծման ճիշտ ուղին սահմանադրության կամ էլ իրավունքի գերակայությունն է քաղաքականության նկատմամբ:

Եթե հարցի լուծման ճիշտ ուղին իրավունքի գերակայությունն է, ապա ի՞նչ է նշանակում «իրավունքի գերակայություն» բանաձևը: Հարցի լուծումը տեսական գրականության մեջ փնտրելն ապարդյուն է: Նույնիսկ այն հիմնարար հետազոտությունները, որոնց վերնագրերում առկա է «իրավունքի գերակայություն» (rule of law, верховство права) տերմինը, շրջանցում են բուն բառակապակցության գիտատեսական մեկնաբանությունը՝ քննարկելով պետաիրավական տեսական ու գործնական այլ խնդիրներ: Հազվադեպ հետազոտողներ են, որ փորձում են բացատրել իրավունքի գերակայությունը, այն էլ՝ շատ թռուցիկ, առանց ծավալվելու՝ հանգեցնելով դա սահմանադրության գերակայության, իրավական օրենքի գերակայության:

Վենետիկի «Հանուն ժողովրդավարության՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի 2011 թ. մարտի 25-26-ի ընդհանուր նիստում ընդունված զեկույցն իրավունքի գերակայության մասին է: Դրա գլխավոր եզրակացությունն այն է, որ, կարծես թե, «իրավունքի գերակայությունն» անհասկանալի մի բան է, և ներկայումս գոյություն չունի փոխհամաձայնություն (կոնսենսուս) «իրավունքի գերակայության» հիմնական նշանակության և դրա տարրերի վերաբերյալ<sup>1</sup>:

Խնդիրը տեսական առումով բարդանում է նաև այն պատճառով, որ «իրավունքի գերակայություն» բանաձևը թարգմանվում է որպես անգլոսաքսոնական «rule of Law» իրավական ձևակերպման համարժեք: Սակայն եթե խորանում ենք անգլոսաքսոնական «rule of Law» բանաձևի անգլիական մեկնաբանության բովանդակության մեջ, ապա տեսնում ենք, որ այնտեղ մշակված այդ հայեցակարգը ավելի շատ համարժեք ու համապատասխան է մեզանում արդեն արմատավորված «իրավական պետություն» հայեցակարգին: Ստացվեց, որ «իրավունքի գերակայությունը» և «իրավական պետությունը» հոմանիշներ են կամ համարժեք հայեցակարգերը նշող տարբեր անվանումներ: Կարծում ենք, որ այդպես է միայն անգլոսաքսոնական, բայց ոչ մայրցամաքային-

<sup>1</sup> Տե՛ս «Report of the rule of law», Strassburg, 11 april, 2011, study, № 512/2009, էջ 13:

եվրոպական, օրինակ՝ գերմանական կամ ռուսական իրավունքի տեսության մեջ:

«Rule of Law» անգլոսաքսոնական հայեցակարգի տեսաբաններն են Ա. Բ. Ռայսին, Մ. Օուկշոթը<sup>2</sup>: Ռայսի կարծիքով՝ բրիտանական իրավական համակարգին հատուկ են երկու հիմնական սկզբունք՝ խորհրդարանի ինքնիշխանությունը և իրավունքի գերակայությունը: Վերջինն ունի երեք հիմնական հատկանիշ. ա) պատիժը նշանակվում է միայն օրենքով հստակ ամրագրված դրույթների խախտման դեպքում, դրանք չունեն հետադարձ ուժ... (հայեցողական լիազորությունները կարող են հանգեցնել կամայականության), 2) ոչ ոք չի կարող վեր լինել օրենքից, և բոլորը պետք է հավասարապես ենթարկվեն օրենքին, 3) իրավունքի գերակայության գաղափարները բխում են ոչ թե գրված սահմանադրությունից, այլ ընդհանուր՝ նախադեպային իրավունքից<sup>3</sup>: Իրավունքի գերակայության այս հայեցակարգի երեք տարրերը վերաբերում են պետական իշխանությանը:

Այս կապակցությամբ հետաքրքիր մոտեցում ունի Ա. Ասատրյանը. «իրավունքի գերակայություն» անգլիական տեսությունը ընդամենը «սահմանափակված պետության» հայեցակարգ է: Իսկ մայրցամաքային իրավական պետության տեսության անվանումն արդեն հուշում է, որ այն վերաբերում է պետությանը կամ ենթադրում է պետության որոշակի կառույց: Այս տեսանկյունից «իրավունքի գերակայություն» հասկացության ինքնուրույն գոյությունը մայրցամաքային իրավական համակարգում դառնում է կասկածելի, քանի որ կա «իրավական պետություն» հասկացությունը: Հետևաբար՝ իրավական կոնվերգենցիան (մոտարկումը), որ առկա է արդի աշխարհում, ենթադրում է, որ ապագայում կա՛մ անգլոսաքսոնական իրավագիտությունը, հրաժարվելով «իրավունքի գերակայությունից», պետք է ընդունի «իրավական պետություն» հասկացությունը, կա՛մ հակառակը՝ մայրցամաքային տեսությունը պետք է հրաժարվի «իրավական պետություն» ձևակերպումից ընդունելով «իրավունքի գերակայություն» բանաձևը<sup>4</sup>:

Մոտեցումը հետաքրքիր է, սակայն «իրավական պետություն» ձևակերպումը առայժմ ունի սահմանադրական ամրագրում: Բացի այդ՝ մայրցամաքային իրավական կառույցները մեր իրավական համակարգին ավելի հոգեհարազատ են: Ուստի անհրաժեշտ է մշակել իրավունքի գերակայության հասկացման նոր տեսական, բացել դրա ինչպես փիլիսոփայական, այնպես էլ նորմատիվ բովանդակությունը:

<sup>2</sup> Տե՛ս **Ademi G.** Legal intimations - Michael Oakeshott and the rule of law // Wisconsin Law Review. 1993, թիվ 3, էջ 839-896; **Coats W. J.** Michael Oakeshott as liberal theorist // Canadian Journal of Political Science - Revue Canadienne de Science Politique. 1985. Vol. 18. թիվ 4, էջ 773-787:

<sup>3</sup> Տե՛ս «Report of the rule of law», էջ 3-4:

<sup>4</sup> Տե՛ս **Ա. Լ. Ասատրյան**, Իրավունքի գերակայության սկզբունքն արդի իրավական համակարգի խորապատկերում, Եր., 2013, էջ 17-18:

«Իրավունքի գերակայություն» ձևակերպման տառացի մեկնաբանությունը նշանակում է իրավունքի՝ որպես համապարտադիր ձև և որոշակիություն ունեցող հասարակական նորմատիվ կարգավորիչի անպայման առաջնայնություն, կիրառման համապարտադիրություն: Այս մեկնաբանությունն այդ բանաձևի ամենապարզ ու հասարակ իմաստն է: Հիմա փորձենք խորացնել դրա տեսափիլիսոփայական հիմքերը:

Իրավական կարգավորման կառուցակարգն արտացոլվում է հասկացությունների տրամաբանական շղթայում՝ իրավունքի նորմեր, իրավունքի գործառույթներ, իրավունքի սկզբունքներ, իրավական հայեցակարգ: Դրանցից որի՞ հարթության վրա է գտնվում իրավունքի գերակայությունը, այն վերաբերում է իրավունքին, թե՛ պետությանը: Կարծում ենք, որ մեր իրավական համակարգում «իրավունքի գերակայությունը» պետք է ընկալվի, հասկացվի որպես իրավունքի սկզբունք:

Իրավունքը և իրավական կարգավորումը համակարգային կազմավորում են իրավունք (էություն, օրինակ՝ բնական իրավունքներ) - դրական իրավունք (երևույթ-օրենսդրություն) - սուբյեկտիվ իրավունքներ և պարտականություններ (իրավունքի կենսագործում): Էությունը դրսևորող երևույթներից են իրավունքի հատկություններից, որակներից բխող իրավունքի ընդհանուր սկզբունքները, որոնք առաջին կարգի, դեկլարար, ամենից ընդհանուր իրավական նորմեր կամ իրավադրույթներ են: Այդ սկզբունքներից մեկն էլ իրավունքի գերակայությունն է:

Այդ սկզբունքի նորմատիվ բովանդակությունը պետք է հասկանալ երկու հարթության վրա: Առաջինը՝ ներհամակարգային-իրավական, այսինքն՝ իրավունքի համակարգում, երկրորդը՝ արտահամակարգային-սոցիալական կամ սոցիոնորմատիվ ընդհանուր կարգավորման համակարգում: Արտահամակարգային, այսինքն՝ սոցիալական կարգավորման կամ սոցիոնորմատիվ համակարգում սոցիալական այլ կարգավորիչների հետ հարաբերակցության մեջ իրավունքի գերակայությունը նշանակում է դրա առաջնայնություն բոլոր տեսակի սոցիալական կարգավորիչներից՝ բարոյականություն, կրոնական կանոններ, սովորույթներ, քաղաքական նորմեր և այլն: Բոլոր սոցիալական կարգավորիչները, մեկնարկային վիճակում ձևավորվելով նախնադարյան համընդհանուր սովորույթներից, աստիճանաբար տարբերակվելով զանազան տեսակների, պատմականորեն գրեթե հավասարաթեք կարգավորիչներ էին: Մական պատմական երկարատև ժամանակի ընթացքում դրանցից մեկը՝ իրավունքը, և հատկապես արդի քաղաքականացված օրենսդրական իրավունքը, հաստատեց իր գերակայությունը մնացածի նկատմամբ, դարձավ համապարտադիր, միասնական, կիրառման առաջնայնություն և ավելի բարձր ուժ ունեցող կարգավորիչ:

Ներհամակարգային-իրավական հարթության վրա իրավունքի գե-

րակայությունը կարծես թե անհասկանալի է. իրավունքը գերակայում է իրավունքի համակարգում: Ստացվում է անհասկանալի դատողություն՝ արտուրդ: Սակայն դա միայն այն դեպքում, երբ իրավամտաճողությունը լեզվատական կամ նորմատիվիստական է: Իսկ եթե մտաճողությունն իրավաբանական է, կառուցված է իրավունքի՝ որպես էության և օրենքի կամ նորմի՝ որպես դրա դրսևորման ձևի տարբերակման չափանիշի վրա, ապա ամեն ինչ ընկնում է իր տեղը: Էությունը, օրինակ՝ բնական իրավունքը կամ ձևական հավասարության համընդհանուր սկզբունքը (ըստ Վ. Ներսիսյանցի իրավունքի ազատական-իրավական տեսության) առաջնային է ձևի (օրենքի) նկատմամբ, այն գերակայում է ձևին, պայմանավորում դրա բովանդակությունը, գոյությունը, գործողությունը, զարգացումը:

Այսպիսով, իրավունքի գերակայությունը իրավական հիմնարար սկզբունք է, ըստ որի անհրաժեշտ է, որ էությունը գերակայի ձևի նկատմամբ: Այդ սկզբունքը հասարակական համակարգի բոլոր ենթահամակարգերին ներկայացնում է հիմնարար, բովանդակային-էական վերակառուցման պահանջ: Իրավական համակարգը պայմաններ և երաշխիքներ է ստեղծում սոցիալական համակարգերի գոյության և գործառնությունների համար: Այդ գործընթացում դեր ունեն նաև իրավունքի հատկապես ընդհանուր սկզբունքները որպես միջնորդավորող օղակ սոցիալական և իրավական համակարգերի միջև: Իրավական կարգավորման երեք հիմնական օբյեկտները՝ անհատը, հասարակությունը և պետությունը, ունեն ինքնուրույն իրավական շահեր, իսկ կարգավորման գործընթացում իրավունքի գերակայությունը կոչված է հավասարակշռելու այդ շահերը, իրավունքի գերակայության նշանակությունը կարգավորման երեք օբյեկտից յուրաքանչյուրի համար նույնական չէ, քանի որ տարբեր իրավական պահանջներ է ներկայացնում նրանցից ամեն մեկին: Իրավունքի գերակայությունը էապես ազդում է անհատի և հասարակության գոյության կերպի ու գործողության վրա, արդյունքում պետությունը փոխակերպվում է իրավական պետության, հասարակությունը՝ իրավական հասարակության, իսկ մարդը՝ իրավական էակի:

Այսպիսով, քաղաքականության և իրավունքի հարաբերակցության հարցի լուծման հանգուցակետն իրավական պետության, իրավական հասարակության, իրավական էակի ձևավորման խնդիրն է: Ներկա պահին, երբ իրավունքին և իրավագիտությանը նետված է նոր ձեռնոց՝ դրանցից առաջնայնությունը խլելու ակնկալիքով, առաջանում է հարցադրում՝ որտեղ է մեր բացթողումը՝ իրավական պետության կառուցման, քաղաքացիական կամ իրավական հասարակության կառուցման, թե՞ իրավական էակի ձևավորման տիրույթում:

Համոզված ենք, որ մեր բացթողումն իրավական էակն է: Երեսուն տարվա ընթացքում մեր սոցիալիզացիայի համակարգը չկարողացավ

homo soveticus-ին դարձնել homo armenicus-juridicus, ինչի հետևանքով վերածննդի նշաններ է ցուցադրում բուլղարիկյան քաղաքական-իրավական ամբոխավարությունը ինչպես զանգվածային մասշտաբով, այնպես էլ մասնագիտական ոլորտներում: Իրավագետների մի մասը ցուցաբերում է մասնագիտական անսկզբունքայնություն: Ինչո՞ւ, որովհետև մենք բաց ենք թողել ոչ միայն հասարակության ընդհանուր իրավական սոցիալիզացիան, այլև իրավագետների բարոյաէթիկական դաստիարակությունը: Հետևաբար մեզ նետված ձեռնոցին ի պատասխան՝ անհրաժեշտ է իրավագիտական կրթական ծրագրերում ներմուծել բարոյաէթիկական նոր տարրեր, մոդուլներ, ուժեղացնել եղածները:

Խնդիրն այն է, որ արդի հասարակությունում իրավունքն օրենսդրական-քաղաքականացված է: Այսինքն՝ օրենքն անցնում է քաղաքական համակարգի մուտք-էլք գործընթացով ու, որպես քաղաքական որոշում, ձեռք է բերում պարտադիր, բարձրագույն ուժ: Բայց քաղաքական համակարգը և դրա դերակատարները գործում են քաղաքական նպատակահարմարությունից ելնելով: Քաղաքականությունը ցանկությունների հնարավորության արվեստ է, այն չունի կաղապարներ և նորմավորված չէ: Քաղաքականությունը ձգտում է իր ցանկություններն անմիջապես վերածել քաղաքական որոշման: Ահա այստեղ է, որ կարևորվում է իրավագիտության ու իրավագետների դերը, որոնք, լինելով քաղաքական որոշումների կայացման գործընթացների խորհրդատվական մասնակիցներ, չպետք է տուրք տան քաղաքականությանը և վերածվեն նրան կուրորեն սպասարկող ծառայի: Իրավագետները բարու և արդարության ծառաներն են ու դրա միջոցով՝ ժողովրդի, այլ ոչ թե քաղաքականության: Իրավագետները, ի տարբերություն քաղաքական գործիչների, ունեն նորմատիվ մտածողություն, որի չափորոշիչները կամ բովանդակային միջուկը իրավունքի սկզբունքներն են: Ունեք քաղաքական ցանկություն, խնդրեմ՝ իրագործենք, բայց դրա կենսագործման նորմատիվ կարգը չի կարող լինել կամայական, հայեցողական, այլ միայն և միայն իրավունքի հիմնարար սկզբունքներին ու արժեքներին համահունչ, դրանց շրջանակում, սահմանադրականության հունով: Հակառակ դեպքում ցանկացած միջոցով քաղաքականության ցանկություններն օրենքի վերածելու ձգտումը, գործելակերպը հանգեցնելու են հասարակական աղետի, կամայականության: Մարդկային գիտակցությունը կվերածվի իրավունքի աղբյուրի՝ անտեսելով իրավական ձևերը՝ սահմանադրությունը և օրենքները: Նորագույն շրջանի հայոց պատմության կուտակած փորձը հաստատում է, որ քաղաքականության իրավական օրինականությունը (այսինքն՝ ճիշտ հիմքերի վրա դրված օրենքի գերակայությունը), իրավունքի գերակայությունն ազգային քաղաքականության հաջողության գրավականն են: Հակառակ դեպքում տեղի է ունենալու ազգային-հասարակական աղետ:

Այդպիսի մի շրջան արդեն ունեցել ենք մեր պատմության մեջ 1920 թ.,

երբ մեծամասնականները, բռնազավթելով իշխանությունը, հաստատեցին իրավական մերժողականության քաղաքական-իրավական դոկտրինը. նրանք անմիջապես անցան, այսպես կոչված, ռազմական կոմունիզմի քաղաքականության՝ պարենմասնատրման, ուղղակի սպրանքափոխանակության, ռազմական հարկադրանքի, քաղաքական տեռորի և այլն: Փաստորեն, հանրապետությունում հաստատվեց 11-րդ կարմիր բանակի վրա հենված ռազմական դիկտատուրա: Չնայած Լեգրանի և ՀՀ կառավարության միջև կնքված պայմանագրին՝ ձերբակալվեցին Առաջին հանրապետության պետաքաղաքական գործիչները, անցկացվեց հայոց բանակի սպաների հաշվառում և 70 սպաների միանգամից արտոբեցին Բաքու, 1921 թ. հունվարից արտոբեցին նաև Դրոն՝ իր զինակիցներով, և 1200 սպաներ, երկրի բոլոր վայրերում սկսվեցին զանգվածային ապօրինի խուզարկություններ և ձերբակալություններ, գույքի կամայական բռնագրավումներ և պետականացում: Այդպիսի քաղաքականության հետևանքը 1921 թ. քաղաքացիական պատերազմն էր: Ծայրահեղ հեղափոխական նիհիլիզմի դրսևորումների իրավական հիմքը սոցիալիստական նոր սահմանադրական կարգավորումն էր, որ հռչակում էր.

*Բուրժուական իրավակարգը և արդարադատությունը արմատախիլ անելու և պրոլետարիատի ու աղքատ գյուղացիության դիկտատուրա հաստատելու ու պաշտպանելու համար վերացվում են նախկին հակահեղափոխական կառավարությունների բոլոր օրենքները և դատարանները: Դրանց փոխարեն՝*

*ա) բանվորագյուղացիական իրավունքի աղբյուր են ճանաչվում խորհրդային օրենսդրությունը, սոցիալիստական իրավագիտակցությունը և հեղափոխական խիղճը,*

*բ) արդարադատության հիմք է ճանաչվում միասնական ժողովրդական դատարանը, որ հենվում է աշխատավոր զանգվածների դասակարգային կազմակերպությունների վրա, միաժամանակ ճանաչվում է արտակարգ դատավարության անհրաժեշտությունը բանվորագյուղացիական հեղափոխության բարձրագույն շահերի պաշտպանության համար:*

Հեղափոխական իրավական մերժողականությունը մի կողմ նետեց ժամանակի սահմանադրական իրավական մտքի նվաճումները, Առաջին հանրապետությունում արդեն ձևավորված խորհրդարանական համակարգի ժողովրդավարական սկզբունքները՝ խորհրդարանականության, պատասխանատու կառավարության, ընդդիմության իրավունքների ճանաչման, պետությունն իրավունքին ենթարկելու և այլն: Ղեկավարվելով դասակարգային շահերով՝ բնակչության առանձին խավեր զրկվեցին ընտրական իրավունքներից, սահմանվեց գյուղի և քաղաքի ընտրական անհավասար իրավունք: Այդ քաղաքականության տխուր հետևանքը կամավոր և խաղաղ իշխանությունը հանձնած

ուժերի ապստամբությունն էր երեք ամիս անց:

Իրավաօրինականության կոպիտ խախտման և ազգային աղետալի հետևանքների դասական օրինակ է Առաջին հանրապետությունում 1919 թ. մայիսին միացյալ և անկախ Հայաստանի հռչակման գործընթացը<sup>5</sup>: Դրա իրավական, ընթացակարգային ձևի հարցերի հետազոտությունը հիմք է տալիս հաստատելու, որ ՀՅԴ-ի և կառավարության գործունեության անդրկուլիսային գործելակերպը կազմակերպված, ծրագրված քաղաքական դավադրություն էր՝ ընդդեմ հանրապետության, հանուն դաշնակցական կուսակցության մենատիրության հաստատման: Այդ են վկայում օրենսդիր մարմնի աշխատանքների նպատակային ձախողումը, վարչապետությունից Հ. Քաջազնունու մեկուսացումը, Ա. Խատիսյանի կողմից նրա լիազորությունների յուրացումը, շրջանցելով խորհրդարանին՝ կառավարության միջոցով կարևորագույն սահմանադրական նշանակության երկու իրավական ակտի ընդունումը («Անկախ և միացյալ Հայաստանի ակտը», «Հայաստանի խորհրդի կազմը 12 ներկայացուցիչներով ուժեղացնելու մասին» օրենքը)՝ առանց դրանց քաղաքական անհրաժեշտության լուրջ քննարկումների, խախտելով դրանք ընդունելու օրինականության և բովանդակային, և՛ ընթացակարգային-ձևային պահանջները: Հետևանքը եղավ ՀՅԴ և ՀԺԿ կոալիցիայի խզումը: Այնուհետև միայն դաշնակցականներով համալրված կառավարությունը, օգտվելով ՀԺԿ-ի հայաստանյան կոմիտեի այսրոպեական որոշումից, առանց օրինական հիմքերի քվեարկությունից հանեց դրա ընտրական ցուցակը: Արդյունքում ՀՅԴ-ն ստացավ պատգամավորական տեղերի բացարձակ մեծամասնությունը, և Հայաստանում հաստատվեց դաշնակցական մենիշխանություն: Եթե միացյալ և անկախ Հայաստանի հռչակման գործընթացները տեղի ունենային իրավական օրինականության հունով, ապա դրանք չէին հանգեցնի դաշնակցական մենիշխանության, խորհրդարանում քաղաքական բազմազանության վերացման, ազգային համերաշխության խարխլման և հետևաբար՝ մնացած ծանրակշիռ քաղաքական ուժերի օտարման: Հետևանքներ, որոնք թուրքական հարձակման և մեծամասնական շարժման մշտական սպառնալիքի պայմաններում որպես ներքին գործոններ նպաստեցին հանրապետության անկմանը:

Այսպիսով, պատմական փորձից քաղված դասն արդիականության համար կարելի է ձևակերպել հետևյալ օրինաչափությամբ. քաղաքականության սահմանադրականությունը և իրավաօրինականությունն ազգային պետականության կայացման և հարատևության կարեվորագույն հիմնասյուներից են<sup>6</sup>:

<sup>5</sup> Տե՛ս **Ա. Գ. Վաղարշյան**, Հայաստանի առաջին հանրապետության օրենսդիր իշխանության համակարգը (1918-1920 թթ.), Եր., ԵՊՀ հրատ., 2012, 288 էջ:

<sup>6</sup> Մանրամասն տե՛ս **Ա. Գ. Վաղարշյան**, Քաղաքականության իրավաօրինականությունը որպես ազգային պետականության կայացման պայման: Հանրապետական



Իրավունքի նկատմամբ քաղաքականության գերակայության պատմական հաջորդ օրինակը կարելի է բերել ներկա հանրապետության սահմանադրական պատմությունից: 1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով դրվեց անկախության գործընթացի սկիզբը: Օրենսդիր մարմինը ծրագրային-իրավական բնույթի Հռչակագրով որպես ռազմավարական նպատակ սահմանեց «Ժողովրդավարական և իրավական հասարակության» կառուցումը: Իրավական բարեփոխումների այդ ռազմավարության խնդիրն էր ինստիտուցիոնալ-սահմանադրական խելամիտ, հավասարակշռված վերակառուցումների միջոցով իրականացնել հասարակական բոլոր հիմնարար կառույցների ժողովրդավարականացումը, Հայաստանում կայացնել քաղաքացիական հասարակությունը, իրավական, սոցիալական պետությունը, մարդու իրավունքները: Սակայն այդ ռազմավարության կենսագործման վերլուծությունը ցույց է տալիս, որ երկրի քաղաքական ղեկավարությունը հրաժարվեց սահմանադրության գերակայության հիմնարար սկզբունքից և սահմանեց ընթացիկ օրենքների գերակայություն սահմանադրության նկատմամբ, ինչն իրավունքի նկատմամբ քաղաքականության գերակայության ցայտուն օրինակ է<sup>7</sup>: **1990 թ. դեկտեմբերի 10-ին ընդունվեց սահմանադրական օրենք «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին»,** որի համաձայն՝ մինչև ՀՀ Սահմանադրության ընդունումը դադարեցվում էր գործող Սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում էին «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա ՀՀ Գերագույն խորհրդի ընդունված օրենքներին: Փաստորեն, այդ օրենքի ընդունմամբ օրենսդիր մարմինը բռնեց գործող Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ չկատարելու ուղին: Նման լողացող իրավաբանական ձևակերպումը հակասական իմաստ ուներ, որովհետև ստացվում էր, որ ՀՀ-ն և՛ ուներ Սահմանադրություն, և՛ չուներ: Ստացվում էր յուրահատուկ իրավիճակ՝ ընթացիկ օրենքների գերակայություն Սահմանադրության նկատմամբ: Այդ սկզբունքը գործեց մինչև 1995 թ. Սահմանադրության ընդունումը: Մեփականաշնորհման տխուր հետևանքները մեծամասամբ պայմանավորված են հենց այդ գործելակերպով:

Երրորդ հանրապետությունում իրավունքի նկատմամբ քաղաքականության գերակայության ցայտուն օրինակներից են նաև 1995 թ. մինչև 2005 թ. անհատներին Սահմանադրական դատարան դիմելու ի-

գիտաժողով՝ նվիրված 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և 1921 թ. հոկտ. 13-ի Կարսի պայմանագրերի 90-ամյակներին, Վանաձոր, 2012, էջ 4-19:

<sup>7</sup> Այս քաղաքական-իրավական գործընթացների մասին մանրամասն տե՛ս **Ա. Գ. Վաղարշյան**, Հայաստանի անկախության հռչակագիրը և ժողովրդավարական, իրավական հասարակության ռազմավարության օրենսդրական կենսագործումը 1990-1991 թթ., «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», թիվ 3(18), 2015, էջ 3-15:

րավունքից զրկելը, 2005 թ. մինչև 2018 թ. նշանակովի վարչապետի ինստիտուտի կիրառումը, այնինչ այդ պաշտոնը Մահմանադրության իմաստով պետք է լիներ ընտրովի:

Բերված օրինակներից երևում է, որ նշյալ գործընթացում իրենց բացասական դերակատարությունն են ունեցել նաև իրավագետները, որոնք սպասարկում էին քաղաքականությանը:

Պատմական փորձից քաղված դասերը հիմք են տալիս առաջ քաշելու և ձևակերպելու հետևյալ օրինաչափությունը. քաղաքականության սահմանադրականությունը, իրավաօրինականությունը և խորհրդարանական իրական բազմակարծությունը ռազմավարական ճիշտ ընտրություն կատարելու, ազգային պետականության կայացման և հարատևության կարևորագույն երաշխիքներ են:

**Բանալի բառեր** – *իրավունք, գերակայություն, քաղաքականություն, իրավամտա-ծողություն, էթիկա, իրավաօրինականություն, նպատակահարմարություն, սահմանադրականություն*

**ARTUR VAGHARSHYAN – Вызовы правоведению: слуга народа или политики?** – В статье раскрывается авторская трактовка формулы “верховенство права” и обосновывается тезис о том, что за период независимости в Армении упустили задачу формирования из homo soveticus-a homo juridicus-armenicus-a и особенно устойчивых этических ценностей у юристов, что приводит к их превращению в слуг политики, извращению их надлежащей профессиональной программы.

**Ключевые слова:** *право, верховенство, политика, правовое мышление, этика, правозаконность, целесообразность, конституционность*

**ARTUR VAGHARSHYAN - Challenges to Jurisprudence: Servant of the People or Politics?** – The article reveals the author’s version of the interpretation formula of the “rule of law” and substantiates the thesis that during the period of independence in the Republic of Armenia they missed the task of forming from “homo soveticus” into a “homo juridicus-armenicus” – and especially stable ethical values among lawyers, which leads to their transformation into a servant of politics, perversion of their own professionalism.

**Key Words:** *Law, rule of law, policy, legal thinking, ethics, legality, advisability, constitutionality*